

տակ , ինչպէս մեր Պահլավունիքն , Նաթանա-
յէէնիք , և Հեթմանք՝ նախահարք Ս . Ներսիսի
Լամբրոնացւոյ , և այլք : Այս զանազանութիւնն ,
այսինքն ոմանց հպատակելն Յունաց և ոմանց ոչ
աւելի ծանր և քննասիւզ եղաւ Հայոց , քան օտար-
ազգեաց յայտնի թշնամութիւնն . անոր համար
ալ քանի մ'անգամ մեծապէս վտանգեցաւ նորին-
ծայ տէրութիւնն , և գրեթէ անհետանալու վը-
րայ էր . թէ և հարազատքն Թորոս Ա և Լևոն Ա ,
իրենց անուանանիշ կենդանեաց ուժով և բար-
քով այնքան աշխատեցան և արիացան՝ որ բռնած
երկիրն իրենց անուամբ Լեւոնի էրիւր , Թորոսի էր-
իւր կոչուէր յայլազգեաց . այլ Յունաց կայսերու-
թեան դեռ բազմագունդ զօրքերէն յօգնեցան և
նեղեցան . ինքնին կայսերքն Յովհաննէս և Մա-
նուէլ եկան անոնց դէմ . թէ և շատ հեղ յաղթե-
ցին , բայց վերջապէս Լևոն Ա գերի ընկաւ ոմամբ
իր որդւոց , և մեռաւ սրանեղութեամբ՝ իբրեւ ա-
ռիւծ 'ի գառազդի , 'ի Կ . Պօլս . որդին Թորոս Բ՝
Ճարտարութեամբ փախչելով 'ի բանտէն՝ նորէն
տիրեց հօրն և հօրեղբօրը բռնած աեղերուն , և
աւելի ալ ընդարձակեց սահմանները , ինչպէս Ե-
տոյ պիտի տեսնեմք :

Ուրիշ կողմէ ալ Թուրքաց ասպատակն և բռ-
նակալութիւնք անգաղար նեղէին արեւելեան կող-
մերը . Եդեսիոյ , Մարաշու , Քեսնոյ , Կարկառայ ,
և ուրիշ Լատին և Հայ իշխանաց կալուածներուն
յափշտակութիւնն՝ պատերազմօք և արիւնհեղու-
թեամբ , մեր կաթողիկոսաց աթոռոց շատ մօտ
և շատ ահարկու էին . անոր համար պատմական
ստուգութիւն և ոչ զարգաբանութիւն պէտք է
ընդունիլ ըսածնիս , թէ Շնորհալույ բոլոր կեանքն՝
քաղաքական անստոյգ և անհանգարտ ժամանակի
մը մէջ անցաւ . զոր և ինքն իսկ ազնիւ և հեզա-
գին գանգատով կ'իմացընէ զանազան գրուածոց
մէջ , ինչպէս 'ի յառաջաբանի Ընդհանրականին .
« Յաղագս ժամանակիս չարութեան և բազմիչ-
« խանութեանն . և քաղաք թագաւորական և
« բազմաթողով ոչ գոյ ազգի մերսմ » . իսկ իրեն
համար կ'ըսուի . չունէր « և ոչ մի գեօղ և ոչ ան-
« դաստանս , և ոչ օգնութի 'ի թագաւորաց և իշ-
« խանաց » : Եւ այնպէս համաշխարհական մըրկի
և տաղնապի ատեն՝ երկու հարազատքն իրենց փո-
քրիկ Մովսէս գղեկին մէջ քաշուած՝ « աղօթէին առ
« Տէր , կ'ըսէ պատմիչն , ապրեցուցանել զնոսա
« 'ի չարաթոյն այլասեռիցն և մարգարէմ քաղա-
« նացն . որ և փրկեալք լինէին և ապրեալք՝ որպէս
« Զնձղուկ յորոգայթէ որսողաց . քանզի Տէր
« ձեռնկալու էր նոցա , ըստ մարգարէին » :

Կը շարունակուի :

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես էրես 240.)

Գ Ա Լ Ի Լ Ի Ա .

Սիդոն , Սարեքդա , Տիշրոս
և Պողոմայիս և Պելլա գետ :

ԺԳ .

Ելլեմք դարձեալ Գալիլիոյ հիւսիսա-
յին ծայրը , և ընդ մէջ Պաղեստինու և
Ասորեստանի սահմանաց կը հանդի-
պիմք երկք քաղաքաց , Սիդոնի , Սա-
րեքդայ և Տիւրոսի , համբաւաւորք 'ի
Ս . Գիրս , համբաւաւորք և 'ի ժամա-
նակս խաչակրաց :

Այս քաղաքներն որոց պատմու-
թիւնն պիտի ընեմք , թէպէտ հրէա-
կան չեն , բայց նոյն ժողովրդեան տա-
րեզրաց մէջ այնպիսի մեծ միջոց մը կը
գրաւեն , որ կրնան կերպով մը նուիրա-
կան երկրին մաս համարուիլ : Ահա ե-
րեք քաղաքք կառուցեալք յափունս
Միջերկրականի . զորս կոխեցին Մա-
րիամու որդւոյն աստուածային ոտքերը .
երեք քաղաքք ճոխացեալք նաւազնաց
վաճառականութեամբ . հռչակաւորք ի-
րենց գոյնագոյն երանգներովը և ճար-
տարութեամբ . բայց և երեքեան իսկ
զոհ երկնային ցասման և վրէժխնդու-
թեան . որ իրենց աւերակներովն կ'ու-
սուցանեն աշխարհի մինչև ցայսօր , թէ
ոչ մի ինչ կարէ ընդդէմ կալ աստուա-
ծային կամաց :

Սիդոն իր անունը իր հիմնադրէն ա-
ռած է , որ էր անդրանիկ որդին Քա-
նանու , և կառուցեալ է 'ի վերջին հիւ-
սիսային ծայրս երկրին աւետեաց : —
Մովսէսի ժամանակ էր մայր ամենայն
քաղաքաց փրկիկեցուց , որոց իշխա-
նութիւնը կը տարածէր յելլութեք գե-
տոյ մինչև ցլեառն Կարմելոս , և ապա
մինչև ցԳաղա : Սիդոնացիք այն ժամա-

նակին առաջին ու երեկի նաւաւարքն էին. կարբեղոն նախանձընդդէմն Հռովմայփիւնիկեցի գաղթականութենէ սկիզբն առած է: Սիդոնացիք հանճարեղ ժողովուրդ մ'էին. իրենց կ'ընծայուի ապակւոյ գիւտը, և նուրբ կտաւի ոստայնանկութիւնը:

Սիդոնացիք առանձին պաշտօն կը մատուցանէին Աստղկան, Աստարտ ա. նուամբ, և կ'անուանէին թագուհի երկնից, աստուածուհի լուսնի, և մայր կենաց:

Սիդոն հպատակեցաւ փոփոխակի Ալեքսանդրի յաջորդաց, ետքը Եգիպտոսի թագաւորաց և վերջապէս Հռովմայեցւոց, 66 տարի առաջ քան զԲրիտոս: Կրեց ինքն ալ հաւասար Պաղեստինու ուրիշ սրբազան քաղաքաց պատերազմաց աղէտքը: Այժմեան քաղաքը Սաիտ կանուանի, որ երբայական և արաբական լեզուաւ կը նշանակէ ձկնորսութիւն. և իրաւքնէ առատ ձուկ կը մատակարարէ. և շինուած է արգաւանդ երկրի մը վերայ կղզւոյ մը մօտ, ուր գիւղաքաղաք մի կայ որ չքնաղակերտ կամրջով մը կը հաղորդի Սաիտի և ցամաք երկրին հետ:

Քանանու տունը զոր քրիստոնեայք եկեղեցի ձևացուցեր էին, հին Սիդոնին արևելեան դրան առջին էր: Այս եկեղեցին որ մզկիթի փոխուած է հիմա, կեցած է տակաւին նորաշէն քաղքին մէջ:

Քրիստոնէից եկեղեցին քաղքէն մի փարսախ հեռի լեւան մը վերայ է, և նուիրուած է Եղիա մարգարէին, և ուրիշ բան չէ բայց եթէ պզտի խորանով ցած աշտարակ մը, առանց ձեղուան, երկինքն ունելով իրեն ձեղուն: Են ոմանք որ կը համարին որ Յիսուս այս լեւան վերայ հանգչած ըլլայ, Սիդոնացւոց երկրէն անցնելու ժամանակ:

Սաիտի մօտ եղած պարտիզաց մէջ մշակուած ծառոց մէկն ալ Ադամայ-թըղենին է որ գեղեցիկ պտուղ մ'ունի. և այսպէս կը կոչուի, վասն զի կը կարծուի որ իրեն լայն տերեւներովը մեր նախահօր մերկութիւնն ծածկելու ծա-

ռայած ըլլայ յետ մեղաց անհնազանդութեան:

Սաիտի մէջ չի տեսնուիր հին Սիդոնին հետքը, 'ի բաց առնելով այն մէկ քանի կուսիաէ սիւներն որ կը տեսնուին քաղքին դրան առջև կիսակործան: Կ'երևի դարձեալ քաղքին հիւսիսային կողմը ծովեղբրքը, գոյնզգոյն մարմարիոն քարէ միւսիոն գեղեցիկ յատակ մը որ կը ներկայացունէ դրասանգներով զարդարուած ձի մը: Բաց աստի պարտ է դարձեալ նշանակել, 'ի պատճառս կրօնական յիշատակաց որոց այցելու եմք, և այն փոքրիկ մզկիթը որ կոչի Նեպպի — Սիդոն, կառուցեալ ըստ աւանդութեան այն տեղը ուր Յիսուս Սիդոնացւոց երկրէն անցնելու ժամակ բժշկեց Քանանացւոյն դուստրը: Կը ցուցնեն նոյնպէս Սաիտի մէջ Բեսելիէլ մեծանուն ճարտարապետին գերեզմանը, որ շինեց սողոմոնեան տաճարին վկայութեան խորանը:

Խաչակրաց պատերազմին ժամանակ յամին 1111, հպատակեցաւ Սիդոն պաշտաման խաչին: Մինչև ցայն վայր կը պահէր տակաւին իր նախկին մեծութեան և փառաց մնացորդներն, և ժամանակագրութիւնք կը խօսին իր եղևնափայտեայ տուններուն վերայ: Յամին 1252 Ս. Լուդովիկոս քաղքին պարսպէն դուրս դղեակ մը կանգնեց որ կեցած է մինչև ցայսօր իր անուամբն:

Սիդոնի պարտէզներն թողլով որ կը չըջապատեն դքաղաքը ծաղկազարդ կանաչ դօտւոյ պէս, կը տեսնուին մէկ փարսախ հեռուէն այլ և այլ շիրիմներ, որոնցմէ շատերն կը պահեն դեռ ևս իրենց վրայի քարերն, որոնք քիչ շատ ամենքն ալ միաձև են: Ոմանք զարդարուած են կէս եղծեալ թեթև տոհմանշաններով, և կը նեկայացնեն ծաղկեայ պսակներ, ծառոց տերեւներ և մարդկային կերպարանքներ:

Ո՛յք են այս քարէ տապանաց ասպընջականք. ինչպիսի անձինք ամփոփած են հոն իրենց աճիւնը. ոչ դք գիտէ. պատմութիւնն կը լռէ յայսմ մասին, և ամենեւին չեմք գտնար յիշատակարան

մը որ մեր այս երկամութիւնը փարատէ. բայց կրնամք հետեցնել այս շիրմաց ճարտարապետութենէն որ մաս մը փիւնիկեցւոց կը վերաբերին և մաս մը յունահռովմէական ժողովրդոց: Ըստ քանի մը անորոշ և անհիմն աւանդութեց՝ շիրիմներէն մին ամփոփած պիտի ըլլայ Սոփոնիա մարգարէին մարմինը և միւսը Չարուղոն նահապետինը: Իրաւ է որ Չարուղոնի ցեղը ունեւր մաս մը երկիր ընդ մէջ Միջերկրականի և Տիբերիա լճին, բայց զիտեմք որ Չարուղոն Եզրիպտոս մեռաւ:

Այս շիրմաց մէջ բլուր մի կը բարձրանայ, և կայ 'ի նմա գետնափոր տեղի մը, որոյ մէջ ըստ աւանդութեան ամփոփած է Ասորեստանի հին թագաւորաց մարմինը: Այս գերեզմանները ժայռի մէջ փորուած են, և մուտքերնին մարդ մը ներս մտնելու չափ հաղիւ մեծութիւն ունի: Ներքին կողմը մտնողն կը մտնի հինգ կամ վեց քառակուսի ոտք մեծութեամբ 'ի ձև բաւղի շինուած այլ և այլ տեսակ սրահներու մէջ:

Այս հին գերեզմանաց թանձր որմերուն վերայ երկայնաձև խորշեր (որոց վերայ կը տեսնուին տակաւին քանի մը բարձրաքանդակներ գրեթէ անճանաչելի) և կարմրագոյն խոշոր նկարներ գործուած էին. բայց ոչ անուն և ոչ գրութիւն մի կայ որ կարենայ լուսաւորել զճանապարհորդը: — Այս գերեզմանաց մեծագոյն մասը բաց են, որոց մէջ սաստիկ ջերմ եղանակին կը քաշուին հովիւներն հանդերձ իրենց հօտիւր: Այս աւերակաց մէջ ճանապարհորդողն չի կրնար տրամութեան զգածմանէն ազատ մնալ. որոց տխրութիւնը աւելի ևս կը սաստկացնեն խորին լռութիւնը և ծովուն մերձաւորութիւնը: Անսահման հորիզոնին տեսարանը որ կը զարթուցանէ 'ի հոգիս յաւիտենականութեան գաղափար մը, միանալով աւերածոց և մահուան պատկերին հետ, կը ձգէ 'ի միտս մեր տխուր մտածութիւններ:

Սախտէն քիչ մը հեռի կը տեսնուին հին Սարբեղա քաղաքին մնացորդները,

որ նուիրագործեցաւ 'ի պատմութեան Եղիա մարգարէին հրաշքներովն: Հոկոսնակէր այն խեղճ այրին որ բնակարան շնորհեց մարգարէին, երբ սաստիկ սով մը կը կեղեքէր Իսրայելի թագաւորութիւնը: Մինչև Ս. Հերոնիմոս ժամանակ և անկէ շատ վերջն ալ կը ցուցնէին տակաւին մարգարէին բնակած տեղը, որ պզտի աշտարակ մ'էր ճիշտ նոյն տեղը վերջէն եկեղեցի մը շինեցին, որ էր միջավայր քաղաքին: Սարբեղայի երկաթահանքն և գինին մինչև հին ժամանակէ համբաւ հանած է: Հեղինակ մը կ'ըսէ որ Սարբեղայի գինիներն այն աստիճան արբեցուցիչ են, որ ամենայն յանդուգն գինեմոլներն իսկ ամուսնան մէջ քսեստ մը չեն կրնար խմել:

Սարբեղա հիմա պզտի աննշան գեղ մ'է, լերան մը վերայ ծովէն հազար հինգ հարիւր քայլ հեռու: Սարբեղա քաղաքն էր ուստի ըստ առասպելաբանութեւն Արամազդ ցլոյ կերպարան մտած յափշտակեց զԵւրոպա: Ոմանք համարեցան որ Սարբեղա անունն յառաջ գայ այն մետաղէն կամ ապակիէն որ կը ձուլէին նոյն տեղուանք. վասն զի Սարբեղա երբայեցեքէն նշանակէ ձուլել մետաղս: Այս կողմանց ապակաշինութիւնը շատ համբաւաւոր էր, մինչև Պլինիոս կըսէ, որ ինչպէս Սիդոնի, նոյնպէս Սարբեղայի ապակիներն մինչև երկայն դարեր կը գիմանային:

Միջերկրականի ծովափունքէն միշտ հարաւակողմն իջնելով, կը գտնեմք զՏիւրոս. քաղաք երբեմն հռչակաւոր, որ թէպէտ աւերակ է այժմ, այլ իրեն պարծանաց յիշատակարանքն են կարքերն և Գատիչէ: Տիւրոս տարածած էր իր վաճառականութիւնը մինչև ցովկիան, 'ի հիւսիսոյ անդր քան զԱնգղիա, և 'ի հարաւոյ անդր քան զՔանարեան կղզիս: Իրեն արեւելից հետ ունեցած յարաբերութիւնը թէպէտ ոչ այնքան ծանօթ այլ շատ մեծ և ընդարձակ էր: Պարսկային ծոցին մէջ Տիւրոս և Արա, տոս կղզիներն որ այժմ կոչին Պահրէյն, և Կարմիր ծովուն վերայ փառան և փիւ,

նիկեան քաղաքն որ կործանեցան Յու-
նաց ժամանակ, կը վկայեն որ Տիւրացիք
յաճախած էին Արաբիոյ և Հնդկաց ծո-
վերը:

Բոլոր պատմագիրք և յիշատակա-
րանք կը նկարագրեն զՏիւրոս՝ հին աշ-
խարհին առաջին ծաղկած, հռչակաւոր
և զօրաւոր քաղաքը: Դշխոյ ծովու, կեն-
դրոն վաճառականութեան, յինքն ձգեր
էր յամենայն կողմանց աշխարհի զա-
նոնք՝ որոցմով կրնար հարստանալ, վա-
ճառելով անոնց ըստ մեծի մասին՝ զեղ-
խութեան, փափկութեան, կենաց դիւ-
րութեան, միով բանիւ ունայնութեան
առարկաներ: Կարևոր, կամ թէ աւելի
ևս ճամարտաբանելով, ահաւոր եղեր էր
բոլոր աշխարհիս ժողովրդոց, և իբրև ընդ
դերեաց կը վարուէր անոնց հետ: Կ'ար-
համարէր զէրուսաղէմ. և այն աստի-
ճան յառաջեց յամպարշտութե, մինչև
կողոպտել սրբազան քաղաքը իր նուի-
րական տաճարովն, մերկացուցանել
զայն իր բոլոր զանձերէն և թանկագին
անօթներէն, և նուիրել զանոնք իր աս-
տուծութեանցը: Ուստի երկնից բար-
կութեանն հանդիպելով, անկաւ իր
ամեն մեծութենէն և փառքէն:

Այժմեան Տիւրոսը, աւազոյ թերա-
կղզւոյ մը ծայրը շինուած է. բայց իր
առջի մեծութեան ամենեկին նշան մը չի
տար: Նաւահանգիստն այն աստիճան
աւազով և ուրիշ տեսակ նիւթերով լե-
ցուած է, որ ձկնորսաց նաւակներն
իսկ հազիւ թէ ներս կը մտնեն: — Տիւ-
րոս ունի մզկիթ մը, երեք եկեղեցի, հա-
սարակաց բաղնիքներ, և քանի մը վա-
ճառանոց: Իր Ալեքսանդրիայի հետ ը-
րած վաճառականութիւնը, որ կը կա-
յանայ գլխաւորապէս 'ի մետաքս և 'ի
ծխախոտ, շատ մեծ նշանակութիւն մը
չունի: — Ծովափունքը կործանած զե-
ղեցիկ սիւներու մեծ բազմութիւն մը և
այն կտորուանքն որ թէպէտ դեռ ևս
յոտին են, բայց թաղուած երկայն դա-
րուց ժողոված աւազոյ կոյտերուն տակ,
ազդու կերպիւ կը վկայեն աշխարհիս
մեծութեան ընդունայնութե: Հին քա-
ղաքէն ուրիշ բան մնացած չէ, բայց ե-

թէ այն զոր մարդիկ չեն կրցեր տանել,
ինչպէս զուարճալի ափանց վերայ իր
գեղեցիկ տեւքը և ընդարձակ նաւա-
հանգիստը:

Հոս 'ի մէջ կը բերեմք Պ. Լամարգինի
Տիւրոսի այժմեան վիճակին վրայ ըրած
մէկ գեղեցիկ նկարագրութիւնը:

« Ընդ մէջ ծովուն, կ'ըսէ գալլիացի
քերթողը, և Լիբանանու լեռանց վերջին
բարձրութեանց, որոնք հոս երթալով
կը ցածնան, դոգցես ութ փարսախ եր-
կայնութեամբ և մէկ կամ երկու լայ-
նութեամբ դաշտագետին մը կը տարա-
ծուի: Այս դաշտագետինը մերկ է, գեղ-
նած, փշոտ ծառերով ծածկուած, յո-
րում կ'արածին անցորդ կարավանաց
ուղտերն: Դէպ 'ի ծով թերակղզի մը
երկնցած է, որ թմբով մը կը բաժնուի
ցամաք երկրէն, և Եգիպտոսէն հողմով
եկած ոսկեղօծ աւազով ծածկուած է:
Տիւրոս, զոր այժմ Սուր կոչեն Արաբա-
ցիք, այս թերակղզւոյս վերջին սուր ծայ-
րին վերայ շինուած է, մանաւանդ թէ
ալիքներէն դուրս բարձրացած: Հեռու-
էն դիտողն ծովահայեաց, նոր, սպի-
տակ և կենդանի քաղաք մը կը կարծէ.
բայց այս կարծիքն գեղեցիկ ըստուեր
մ'է, որ մերձենալով կը փարատի: Այս
օրուան Տիւրոսն ուրիշ բան չէ, բայց
եթէ քանի մը խախուտ և անապատ
տուներ, ուր Արաբացիք կը ժողովեն
իրիկունները իրենց ոչխարաց և այծից
հօտը: Տիւրոս ոչ ևս է նաւահանգիստ
ծովու, և ոչ ճանապարհ երկրի »:

Թողլով և զՏիւրոս և շարունակելով
մեր ճամբան 'ի հարաւ, միշտ ծովափուն-
քէն, կը հասնիմք Պաղոմայիս որ Միջեր-
կրականի վերայ է, վաղեմի քաղաք փիւ-
նիկեցւոց և նաւահանգիստ ծովու: Իր
հին երրայական անունն է Աքքօ. զոր Ա-
րաբացիք կաչեն այժմ Աքքա, իսկ Յոյնք
անուանեցին Աքէ. որք անդիտանալով
թէ Աքքօ երրայական անուն է, Աքէ
կոչեցին հանելով 'Ακρόρα, յունական
բառէն որ նշանակէ քժշկել. կարծելով
որ իր անունը Հերքիւլէսի դէպքէն ա-
ռած ըլլայ. վասն զի Հերքիւլէս օձէ մը
խածուելով, բժշկուեցաւ այս տեղը:

իսկ իր այժմեան Պտղոմայիս անունը, հաւանաբար Եգիպտացւոց Պտղոմէոս թագաւորաց մէկուն անունէն առած է:

Պտղոմայիս՝ Ալէքսանդր Յաննէոսի միջոց առ ժամանակ մի Հրէից ձեռքն անցաւ, բայց շուտով կորուսին, և տիրեցին Եգիպտացիք: Կլաւդիոս կայսր հոս հռովմէական գաղթականութի մի հաստատեց, և մինչև ցայսօր գտնուած հին մետաղներն կը վկայեն այս գաղթականութեան հաստատուելուն: Հերակլիոս կայսեր ժամանակ յամին 636 տիրեցին Արաբացիք առաջնորդութեւն Օմար Խալիֆայի. բայց խաչակրաց ժամանակ Եգիպտացւոց ձեռքն էր, ինչպէս նաև բոլոր Պաղեստին: 1104 թվականին երբ տիրեց քաղքիս Պոտուէն Ա. Երուսաղեմի թագաւորը, մէկէն մեծ յարգ ստացաւ, մասնաւորապէս իր նաւահանգստին համար, որ իր ապահովութեամբ և մերձաւորութեամբ կը դիւրացնէր խաչակրաց երթևեկը: Բայց քրիստոնէից իշխանութիւնը երկար ժամանակ չի տևեց, այլ մերթ Եգիպտացւոց ձեռքն անցնելով և մերթ այլոց իշխանութեանց, վերջապէս 1517 թուականին տերեցին Օսմանցիք, որոց տէր են և մինչև ցայժմ:

Այս քաղաքը եռանկիւնաձև շինուած էր. արևմտեան և հարաւային կողմանէ կը թանար ծովէն. իսկ ցամաքէն՝ իրար մէջ յիսուն քայլ հեռաւորութեամբ կըրկին զօրաւոր պարսպով պատած էր, և միջոց ընդ միջոց բազմաթիւ զօրաւոր աշտարակներով ամրացած: Առաջին պարսպին արևելեան ծայրը միւսերէն աւելի մեծ և զօրաւոր աշտարակ մը կար, և կը կոչուէր Աշտարակ շարքային. և ասոր մօտ ուրիշ մը, ամեն ժամանակ Աշտարակ ակիճից կոչուած, որ և հաստատեց իրեն վատթար անունը. վասն զի սառակինոսք այս աշտարակէն քաղաքը մտան:

Յամին 1200 ահաւոր երկրաշարժով մը Պտղոմայիս մաս մը կործանեցաւ. որ այնպէս սաստիկ եղաւ, որ մինչև կարծել տուաւ Միջագետաց, Ասորեստանի

և Եգիպտոսի բնակչաց՝ թէ վերջին դատաստանին օրը հասած ըլլայ:

Պ. Միշօ, պատմագիրն խաչակրաց, Պտղոմայիսի վրայ խօսելով այսպէս կը նկարագրէ քաղքին նոյն ժամանակուան վիճակը:

« Գալլիացիք մեծաւ մասամբ հալածուելով Պաղեստինու միւս քաղաքներէն, բոլոր իրենց հարստութեամբն հոս ապաւինեցին: Արևմուտքէն եկող բոլոր նաւերն հոս կը թափէին իրենց բեռը. կը տեսնուէին հոս աշխարհիս ամեն կողման հարուստ վաճառականներն: — Քաղաքը թէ տարածութեւն և թէ իր բնակչաց նկատմամբ մեծ աճեցումն ստացեր էր. տուները քառակուսի քարերով շինուած էին, ամենքն ալ հաւասար բարձրութեւն. շինուածոց մեծագոյն մասին յարկը սարահարթ կամ դարատափ ծածկուած էր. զլիաւոր տանց ներքսակումը նկարներով զարդարուած էին, և իրենց լոյսը ապակիէ պատուհաններէ կ'ընդունէին, որոց զօրծածութիւնը նոյն ժամանակ կարգէ դուրս զեղխութեանց կարգն էր: Հասարակաց հրապարակաց մէջ թափանցանց կերպստեօթոց մը կը պահպանէր զժողովուրդը արեգական ջերմութենէ: Երկու պատուարաց մէջ որ կը փակէին զքաղաքը յարեւելից՝ կը բարձրանային իշխանաց և մեծամեծաց ապարանքն ու պալատներն. իսկ արհեստաւորք և վաճառականք քաղքին ներքսակումը կը բնակէին: —

« Պտղոմայիսի մէջ բնակող իշխանաց և ազնուականաց մէջ նշանաւոր էին Երուսաղեմի թագաւորը, իր եղբայրները և ընտանիքը, Գալիլիոյ և Անտիոքայ իշխանները, Գաղղիոյ և Կիպրոսի թագաւորաց տեղակալքը, Կեսարիոյ դուքսը, Դրիբուլիի և Յոպպէի կոմսերը, և Պէրութի, Տիւրոսի, Տիւբրիոյ ու Սիդոնի, և այլն, պարոնայքը: Կը կարդամք հին ժամանակագրութեան մը մէջ որ բոլոր այս իշխանները և պարոնայք կը պտըտէին հասարակաց հրապարակաց մէջ կրելով զուխնին թա-

գաւորական ոսկիէ պսակ. իսկ իրենց բազմաթիւ ուղեկիցքը ոսկեփայլ ըզգեստներ կը հագնէին, և բոլոր օրերն ին հանդէսներու, տեսարանաց և վըւարճութեանց կ'անցունէին:

« Ժամանակակից պատմագիր մը ցաւօք սրտի կ'ողբայ բարուց ապականութիւնն որ կը տիրէր յայնժամ 'ի Պտղոմայիս. օտարականաց ամբոխն կը բերէր և կը թափէր հոն ամեն ազգաց ախտերն, որով մեղկութիւնը և զեղխութիւնը ժողովրդեան ամեն դասուց մէջ տարածուած էր. կղերն իսկ ազատ չէր այս հասարակաց ապականութենէն. Ասորուց երկրին բնակչաց մէջ ամենէն թուլամորթը և զեղծը Պտղոմայեցիքն էին:

« Պտղոմայիս ոչ միայն հարստութիւն Ասորուց երկրին առաջին քաղաքն էր, այլ և զօրութեամբն իւրով զամենեւին կը գերազանցէր: Ս. Լուդովիկոս Պաղեստին եղած ժամանակ բանի մը չէր խնայած քաղաքն ամրացնելու համար: Ծովուն կողմանէ կրկին պարիսպք մէջ ընդ մէջ բարձր աշտարակներով կը շրջապատէին քաղաքը, և խորունկ փոս մը կ'արգելուր դէպ 'ի պարիսպ մերձեւնալը: Կար դարձեալ նաւահանգստին բերանը զօրաւոր բերդ մը.....

Անոնք որ կը ներկայացնէին Նաբոլիի թագաւորը, տեղակալք թագաւորին Կիպրոսի, Գալլիացիք, Անգլիացիք, Պապին նուիրակը, Երուսաղեմի պատրիարքը, Անտիօքայ իշխանը, զինուորական երեք կարգերը, վենետիկեցիք, ճենովացիք, Բիզացիք և այլք, ամենքը իրենց առաձին թաղերն ունէին իրարմէ անկախ իրաւասացութիւն, ատեան և դատաւոր: — Այս թաղերն իբրև մէյմէկ զանազան քաղաքներ էին, որք թէ լեզուաւ, թէ սովորութեամբ և թէ նոյն իսկ շահով կը տարբերէին իրարմէ: Ուստի անկարելի էր կարգ դնել այնպիսի քաղաքի մը, ուր այնչափ իշխանք կ'օրինադրէին, ուր տեղ մը պատուհասեալ ոճիրն, այլուր ապաւէն կը գտնէր: Ուստի անսանձ էին ամենայն յանցանք

և անառակութիւնք, որ և ստէպ արիւնահեղ տեսարաններ կը բանային: Բաց 'ի տեղային կռիւներէն, չի կար Եւրոպիոյ մանաւանդ իտալիոյ մէջ երկպառակութիւն մը որուն անախորժ հետեանքներն ինչուան Պտղոմայիս չհասնէին: Կուելփեանց և Կիպելեանց գժտութիւններն՝ կը խռովէին և Պտղոմայեցոց հոգին. վենետիկեցւոց և ճենովացւոց մրցութիւնքն այնչափ արեանհեղութեանց պատճառ եղան և 'ի Պտղոմայիս: Ամեն ազգ իրեն բնակած թաղին մէջ առանձին բերդեր և ամրութիւններ ունէր, մինչև եկեղեցիներն անգամ կ'ամրացընէին: Կըրնայ գուշակել ամենայն դը որ այս ամրութիւններն ոչ այնչափ թշնամւոյն, որչափ իրենց մերձաւորին և նախանձորդին դէմ պատուար քաշելու համար կը գործածուէին: »

Կ'ըսեն թէ հիմա Պտղոմայիս 15,000 բնակիչ ունենայ, որոնք տուրեառի կը պարապին, և կը հանեն 'ի վաճառցորեան, մետաքս և բամբակ: — Հին աւերակները և նոյն իսկ խաչակրաց ժամանակիները գրեթէ բոլորովին անհետացած են: — Պտղոմայիսի չորս կողմը կայ ութ փարսախ երկայնութեամբ և երկու փարսախ լայնութեամբ մշակելի երկիր, որ շատ արգաւանդ է և կը հասցունէ առատութեամբ ցորեան և բամբակ: — Բայց երկրաշարժը ահագին փոսեր բանալով ամեն տարի ձմեռնային անձրևներով փնասակար լիճեր կը ձևանան:

Այս դաշտագետնին մէջէն կ'անցնի Պէլլս գետը որուն անունը ամենեւին չի յիշատակուիր ոչ հին և ոչ նոր կտակարանաց մէջ, բայց համբաւաւոր է 'ի հնութեան, վասն զի իր ափանց քով գտան փիւնիկեցիք ապակին: Ըստ Յովսեպոսի կ'ընթանայ այս գետը երկու ասպարէզ միջոց, որ է գրեթէ երկու հարիւր յիսուն քայլ: — Այս գետին ջուրը խմելի չէ, և յատակը ճախճախուտ է. բայց ծովային ջուրը ծովափանց քով լուալով իր աւազը՝ կը մաքրէ, որով գործածելի կ'ընէ ապակեգործութեան: Այն ափունքը ուսկից այս ա.

ւազը կը ժողովեն՝ 500 քայլէն աւելի տա-
րածութիւն չունի. և թէպէտ այնչափ
դարերէ 'ի վեր շարունակ կը հանեն
աւաղ, բայց տակաւին անսպառ է և
անդադար կը պատրաստէ:

Կը շարունակուի:

ԼՃԱԿԻՍ ԶԿՆ ՈՐՍԸ

ԵՐԵՎԱՆԻ ՍՈՍՈՍԻՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՈՒԹԻՒՆՔ

ՄՈՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԸ:

Այսօրիկ տխուր ու վշտաբեր գաղա-
փարք են մտացս խորհրդոց:

Մոռացութեան անուանեալ Մարգս, հո-
ղի մըն է խոհուն, էակ մը որ ինծի նման
ամենայն մտաւոր կարողութեամբք ստեղ-
ծեալ է, և ըստ ամենայն մարդոյ հաւա-
սար իրաւամբք՝ ամենայն բարեաց ժառան-
գակից: Այլ որովհետեւ աշխարհիս համա-
րեալ բաղդէն զուրկ է, որովհետեւ ունայն
է ամենայն մեծութենէ, և ամենայն փա-
ռաց փայլէն թափուր, մեկդի անկեալ մէկ
մը եղած է և առ ոչինչ համարեալ, որով
զոգցես Մոռացութեան մէջ ինկած Մարդ
մըն է:

Ես այս պատուհանիս առջևը նստած,
գլուխս ձեռքիս կոթնցուցած, ստէպ խոր-
հրդածելով կը դիտեմ այդ Մոռացու-
թեան Մարդը, այդ վշտաց արարածը, որ
իր թափառական ոգի, լճակիս միայնու-
թեանը մէջ դոյզն լաստայիտայտով մը կը
թափառի, սակաւատեւ կենացը տաժանելի
հաց մը հայթհայթելով:

Ո՛րչափ պարզ է, կ'ըսեն խորհուրդքս ին-
ծի, այդ ցաւակցութեան արարածին և զոգ-
ցես 'ի չաղգս համարեալ մարդուն կեանքը
քան զանոր, որ փառաց ստուերի մը ետե-
ւէն կաթողին չըջելով՝ ունայնութեան վըշ-
տերովը կը պճնի:

Սա մոռացեալ աշխարհէս և աշխարհայի-
նէրէն լքեալ և չարակրութեանց իսկ մատ-
նեալ, նիւթական կեանքի մը կարօտու-
թիւնները, թէպէտ վշտք, լեցընելով,
կ'անցնի կ'երթայ իր հանգստեան ճամբայն,
անյիշատակ ամենեւին 'ի մարդկանէ: Չկայ
աչք մը որ իր շիրմին վրայ արօտսը թա-
փէ. չունի բարեկամ մը որ իր գաղաղին
յուզարկաւոր երթայ. և ոչ իսկ բարեկամ
կամ կարող ձեռք մ'ունի, որ իր հոգա-

պատեանին վրայ խաչ մը, քար մը կամ
նշան մը դնէ որ իր աշխարհային անցքը աղ-
նարկէ: Անցաւ իբր ստուեր անհետ. բայց
երեւէկ իրեն. գոնէ զրկելոյ մը արտասու-
քը հետը չարաւ:

Իսկ նա՛ այն փառահեղ մահկանացուն,
յետ բաղմագոյն վշտք անցաւոր փառքը
ստանալուն, յետ չքեղութեան ու պատուոյ
կատարը հասնելուն, և ամենայն համա-
րեալ քաղցրութիւնքը վայելելուն, հուսկ
ուրեմն անցաւ և ինքը, և մի և նոյն անշուք
հոգը ծածկեց անոր ոսկերաց շիրմին ալ:
Այլ ինքը գուցէ չանցաւ անյիշատակ, և ոչ
անոր մնացորդքը ծածկող հոգը գուցէ մնաց
անթաց: Անոր յուշարկաւոր սիրելեաց
խումբին արտասուքը անշուշտ ցլետին
բնակարան իրեն ընկերեցին. և արդ այն
մահկանացու մնացորդաց հողին վրայ յի-
շատակարան մը կայ որ անոր առաքինու-
թիւնները կը պատմէ:

Այլ ինչ օգուտ, անցաւ և ինքը քրպէս
և ամենայն ոք, և ո՛ր գիտէ որչափ զրկելոյ
արտասուքը այն յիշատակարան վիմին
ներքևը հետը թաղեց:

Այսպէս ամենայն ծնունդ կ'անցնի աշ-
խարհէս: Կեանքը՝ ծովու ալեաց նմանու-
թիւն մ'ունի. առ վայր մը խրոխտ կամ
հեղ իրենց գալուստը կը զգացնեն, այլ
ապա առհասարակ ամենը միօրինակ ծով-
ափին վրայ սպառելով կ'անհետանան:

Նմանապէս մարդկային էութիւնն ալ.
փառաւոր կամ անարգ կենաց ծոցը կը
յայտնուի. այլ ապա ամենը մի և նոյն օրի-
նակաւ և մի և նոյն հողուն վրայ կը սպա-
ռին ու յաւիտենականութեան ծովափը
կ'անհետանան: Եւ եթէ դեռ ևս աշխար-
հիս վրայ էութեան մը հետք կը մնայ, ա-
նոր բարութեան յիշատակն է կամ չա-
րեաց անէ՛ծքը:

Իմ Մոռացութեան Մարդս ուրեմն լճա-
կիս անինչ բնակիչն է. կամ թէ ըսեմ, լճա-
կիս աստանդական ոգին. իր ճոխութեան
ժառանգութիւնը երկնից զուտ կամարն է
և ծովային ջուրն. իսկ վայելից պարզեւ
կենաց պարզութիւնը ու միայնութեան
անմեղութիւնը:

Ա.

Ներդաշնակ ճայն մը:

Յետ անհաստատ եղանակէ մը, ուր ա-
մառնային արեւակէզ օրերուն միջոցը,
չորից եղանակաց աւուրք մի զմիոյ կնի
անժոյժ յարատեւութեամբ յաջորդեցին: